ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

✆ 0256-2-14-75
էլ. փոստ:
loriberdhamaynq2017@mail.ru

28.07.2026թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2027 ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդի համայնքապետարան

Սույն թվականի հուլիսի 28-ին՝ ժամը 11:00-ին, Լոռի Բերդի համայնքապետարանի նիստերի դահլիճում համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանի և համայնքապետարանի պատասխանատու աշխատակիցների կողմից անցկացվեց հանրային լսում՝ ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2027 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրերի վերաբերյալ բնակչության կարծիքը լսելու և դրա հիման վրա ՀՀ կառավարությանն համապատասխան սուբվենցիոն ծրագրեր ներկայացնելու նպատակով:

Հանրային լսումը վարեց Լոռի Բերդ համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը:

Հանրային լսմանը ներկա էին համայնքապետարանի աշխատակիցները, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարները և բնակիչներ՝ ընդհանուր թվով 52 մասնակից: Մասնակիցների ցուցակը և լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

Համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը ներկայացրեց հանրային լսման նպատակը՝ նշելով, որ սուբվենցիոն ծրագրերի հայտեր ներկայացնելուց առաջ անհրաժեշտ է կազմակերպել հանրային քննարկում՝ բնակչության կարծիքը լսելու և համայնքի համար առաջնահերթ ծրագրերը հստակեցնելու նպատակով:

Համայնքի ղեկավարը տեղեկացրեց, որ 2027 թվականին համայնքի 5 բնակավայրերում նախատեսվում է իրականացնել ճանապարհաշինարարական աշխատանքներ՝ մոտավորապես 500 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: Ծրագրի շրջանակներում

նախատեսվում է իրականացնել **ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների կանոնավոր տուֆ քարով սալարկման աշխատանքներ**: Նշվեց նաև, որ ծրագրի նախագծման աշխատանքները նախատեսվում է իրականացնել առաջիկայում:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 500 մլն դրամ: Նախատեսվում է իրականացնել համայնքի Ագարակ, Ուռուտ, Լեջան, Սվերդլով և Յաղդան բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների կանոնավոր տուֆ քարով սալարկման աշխատանքներ: Աշխատանքների ընդհանուր ծավալի ավելի քան 70 տոկոսը կիրականացվի Ագարակ և Ուռուտ բնակավայրերում, իսկ մնացած մասը՝ Լեջան, Սվերդլով և Յաղդան բնակավայրերում: Համայնքի մյուս 4 բնակավայրերում 2027 թվականին ներհամայնքային ճանապարհների կառուցման անհրաժեշտություն չկա, քանի որ ճանապարհային հիմնական ցանցը կառուցված է, և նոր կառուցման ենթակա ճանապարհահատվածներ առկա չեն: Համայնքի ղեկավարն անդրադարձավ նաև 2026 թվականի սուբվենցիոն ծրագրին՝ նշելով, որ համայնքի բոլոր բնակավայրերում նախատեսվում է իրականացնել համայնքային կենտրոնների բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ, ինչպես նաև խաղահրապարակները համալրել նոր մարզասարքերով և տաղավարներով:

Ագարակ բնակավայրի բնակիչ Վահագն Մելիքջանյանը համայնքի ղեկավարին հարց ուղղեց՝ արդյոք հնարավոր է սուբվենցիոն ծրագրի շրջանակներում բարեկարգել Ագարակ բնակավայրի ֆուտբոլի դաշտը:

Համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը պատասխանեց, որ նշված աշխատանքը սուբվենցիոն ծրագրի շրջանակներում հնարավոր չէ իրականացնել, սակայն այն կարող է իրականացվել այլ ծրագրերի միջոցով: Մասնավորապես, համայնքի ղեկավարը նշեց, որ «Մասնակցային բյուջետավորում» ծրագրի շրջանակներում բնակիչները կարող են համապատասխան հայտեր ներկայացնել:

Համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը տեղեկացրեց նաև, որ առաջիկայում համայնքում նախատեսվում է գործարկել անվճար համայնքային տրանսպորտ, որի հետ կապված ծախսերը հոգալու է համայնքը:

Լոռի Բերդ համայնքի ավագանու անդամ Անահիտ Սիմոնյանը, խոսք խնդրելով, շնորհակալություն հայտնեց համայնքի ղեկավարին և բոլոր կազմակերպիչներին՝ համայնքի երեխաների համար ամառային ճամբար կազմակերպելու համար:

<u>Հանրային լսման արդյունքները</u>

Հանրային լսման ընթացքում քննարկվեց **ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների կանոնավոր տուֆ քարով սալարկման ծրագիրը**:

Քննարկման արդյունքում **Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի բնակիչները հավանություն տվեցին ներկայացված ծրագրին**՝ կարևորելով համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգումը և տուֆ քարով կանոնավոր սալարկումը:

Ներկա բնակիչները, մասնավորապես, ընդգծեցին, որ ճանապարհների բարեկարգումն անհրաժեշտ է համայնքի բնակավայրերի բնակիչների անվտանգ և հարմարավետ տեղաշարժն ապահովելու, բնակավայրերի ենթակառուցվածքները բարելավելու և համայնքի ընդհանուր զարգացմանը նպաստելու համար:

Այսպիսով, հանրային լսման մասնակիցների կողմից **հստակ հավանության արժանացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների կանոնավոր տուֆ քարով սալարկում ծրագիրը**, և առաջարկվեց ծրագիրը ներկայացնել ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով:

Հանրային լսման ավարտին համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին՝ ակտիվ մասնակցության և համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ իրենց կարծիքն ու առաջարկությունները ներկայացնելու համար:

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՂՈՒՀԻ՝ **Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**